ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 9 նիստի, կայացած 2024թ. հոկտեմբերի 25 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Հ. Սահակյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 1 /մեկ/ միավոր քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,033513հա / ծածկագիր 10-006-0254-0031 / վարելահողը փոխադրել խոտհարքի չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի խոտհարք է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված 0,033513հա վարելահողը, որը հանդիսանում է քաղաքացու սեփականությունը՝ դասել խոտհարքերի շարքին:

Առաջարկվեց Արենի համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Արենի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 1 /մեկ/ միավոր քաղաքացի Վարդգես Վարդանյանի սեփականություն հանդիսացող 0,033513հա / ծածկագիր 10-006-0254-0031 / վարելահողը փոխադրել խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողի սեփականատիրոջը՝ համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ
Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ